գետի միւս ափն եւ ահա այդտեղ "եղեւ լալ եւ կրճտել ատամանց." այդտեղ պէտք է ժողովուրդը քամէր դառնութեան վերջին մրուրը:

Հայերի Երասխ գետից անցնելը:

"Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,
Հին հին դարուց յիշատակ
Աչեաց մէջը պտրում եմ:

"— Արաքս, ինչո՞ւ ծրկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չը հասած,
Սրգաւոր ես ինձ նման:"

"— Մէջքը ուղղուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նման գոռալով,
Ելաէս խօսեց յատակից:

"— Խիզախ, անմիտ պատանի,
Նիրնոս ինչո՞ւ դարեւոր
Վրդովում ես, նորոգում՝
Իմ ցաւերը ըիւրաւոր:"

Դէ լսիր պատմեմ:

"1605 թուին Սեպտեմբերին, մի չարաբաստիկ օր, դեռ վաղորդեան արեւը չը ծագած, Արաքսի գետափունքը ծագէ ի ծագ լցուած էր անհամար բազմութեամբ մարդկան: Ցղամարդ, կին, պառաւ, ծեր, մանուկ, նորատի գեղանի հայ կուսանք, կայտառ, քաջ հայ պատանիներ աղիողորմ կականով լալիս ու գոռում էին: Պարսից Շահաբբաս թագաւորը իր աւագանու հետ բազմած գետի ափին, հրաման տուեց, որ ժողովուրդն անցընեն գետից. իսկոյն մուներիկներ ընկնելով բազմութեան մէջ, սկսեցին բարձրաձայն գոռալ — հրաման է Մեծ Շահաբբաս Շահնշահից ան-